

3

ՓԵՏՐՎԱՐԻ
2021

Luys



Lnyu®



ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ
ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՌԻՍԿԵՐԸ

ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՌԻՍԿԵՐԸ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
1. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹՈՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	2
1.1. Մասնագիտացումը առաջին ատյանում.....	2
1.2. Մասնագիտացումը վերաքննիչ դատարանում.....	3
1.3. Մասնագիտացված դատավորների թափուր տեղերի համալրման կարգը	4
2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ	5
2.1. Դատավորների մասնագիտացման դրական և բացասական կողմերը.....	5
2.2. Դատավորների մասնագիտացումը այլ երկրներում	6
3. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹՈՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ	11
3.1. Նախագծերի փաթեթի հիմնավորվածությունը	11
3.2. Նախագծերի փաթեթը որպես առկա քաղաքական համատեքստում դատավորների անկախության համար ռիսկ.....	14
3.3. Նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումների վտանգները արդար դատաքննության իրավունքի համար	15
3.4. Նախագծերի փաթեթի սահմանադրականությունը.....	17
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2021 թ. հունվարի 14-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանություն տվեց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթին¹ (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ) և այն անհետաձգելի համարելով ուղարկեց Ազգային ժողով²: Ինչպես Կառավարության նիստի ընթացքում, այնպես էլ դրանից հետո Նախագծերի փաթեթը այդպես էլ չտեղադրվեցին Կառավարության պաշտոնական կայքէջում: Մինչդեռ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի³ և դրա հիման վրա ընդունված ՀՀ կառավարության աշխատակարգի համաձայն⁴ կառավարության նիստի օրակարգի՝ վարչապետի կողմից հաստատված նախագիծը և դրանում ներառված հարցերը կառավարության նիստի անցկացումից առնվազն մեկ օր առաջ հրապարակվում են կառավարության պաշտոնական կայքէջում, որից հետո օրակարգի նախագծում կատարվող փոփոխությունները (հարցեր հանելը կամ նոր հարցեր ներառելը) հրապարակվում են անմիջապես⁵:

Նախագծերի փաթեթի սկզբնական տարբերակում առաջարկվում էր քրեական մասնագիտացման դատավորների շրջանում ստեղծել ավելի նեղ երկու ենթամասնագիտացումներ: Առաջին ենթամասնագիտացման դատավորները քննելու էին *միայն մինչդատական քրեական վարույթի վերաբերյալ գործերը* (այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունները), իսկ երկրորդ ենթամասնագիտացման դատավորները՝ ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված *կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը*⁶:

¹ Նախագծերի փաթեթը հասանելի են Ազգային ժողովի պաշտոնական կայքէջում՝ <http://parliament.am/agenda.php?lang=arm:>

² 2021թ. հունվարի 27-ին ՀՀ կառավարությունը որոշեց Ազգային ժողովին առաջարկել 2021թ. փետրվարի 3-ին հրավիրել արտահերթ նիստ՝ Նախագծերի փաթեթը առաջին և երկրորդ ընթերցումներով քննարկելու նպատակով:

³ Հոդված 10, մաս 17:

⁴ Կետ 71:

⁵ Սույն վերլուծության պատրաստման համար հիմք է ընդունվել Ազգային ժողովի պաշտոնական կայքէջում հրապարակված Նախագծերի փաթեթը:

⁶ «Լույս» հիմնադրամի կողմից 2020թ. սեպտեմբերի 1-ին հրապարակվել է «Հակակոռուպցիոն դատարաններ. Հայաստանում առաջարկվող ձևաչափն ու այլ երկրների փորձը» վերտառությամբ վերլուծությունը, որտեղ մանրամասն անդրադարձ է կատարվել կոռուպցիոն գործերով դատարանների մասնագիտացմանը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=180> (այցելվել է 03.02.2021թ.):

2021 թ. փետրվարի 2-ին Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում Նախագծերի փաթեթի քննարկման ժամանակ ներկայացված առաջարկությունների հիման վրա որոշվեց քրեական մասնագիտացման դատավորների շրջանում ստեղծել միայն մեկ ավելի նեղ մասնագիտացված դատավորներ, որոնք կքննեն միայն *մինչդատական քրեական վարույթի վերաբերյալ գործերը* (այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունները):

«Լույս» հիմնադրամի կողմից իրականացված վերլուծության մեջ նախ ներկայացվում է Նախագծերի փաթեթով առաջարկվող մինչդատական քրեական վարույթի գործերով դատավորների մասնագիտացման ձևաչափը (մաս 1), ապա այլ երկրների փորձը (մաս 2), որից հետո քննարկման առարկա են դարձվում Նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումների խնդրահարույց կողմերը (մաս 3):

1. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹՈՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

1.1. Մասնագիտացումը առաջին ատյանում

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է եռաստիճան դատական համակարգ (հոդված 163, մաս 1)⁷

- 1) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններ, ինչպես նաև վարչական դատարան և այլ մասնագիտացված դատարաններ,
- 2) վերաքննիչ դատարաններ,
- 3) Վճռաբեկ դատարան⁷:

Հայաստանի Հանրապետությունում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններ գործում են Երևան քաղաքում և յուրաքանչյուր մարզում (բացառությամբ Արարատի և Վայոց ձորի մարզերի, որոնցում համատեղ են) (հոդված 23, մաս 1): Իր հերթին առաջին ատյանի ընդհանուր իրավասության

⁷ Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը (Սահմանադրություն, հոդված 167, մաս 1): ՀՀ դատական համակարգի կառուցվածքի մասնրամասները սահմանված են «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով (ընդունվել է 2018թ. փետրվարի 7-ին, ՀՕ-95-Ն, ՀՀՊՏ 2018.02.12/10(1368), հոդված 143), որի համաձայն առաջին ատյանում գործում են ընդհանուր իրավասության դատարանը և երկու մասնագիտացված դատարաններ՝ վարչական և սնանկության (հոդված 2, մաս 3):

դատարանում դատավորները բաժանված են երկու մասնագիտացման՝ քրեական և քաղաքացիական⁸ (հոդված 21, մաս 1):

Նախագծերի փաթեթով առաջարկվում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման դատավորների շրջանում առանձնացնել ավելի նեղ մասնագիտացման դատավորներ, ովքեր կքննեն բացառապես մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ:

Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում նույնպես նախատեսվում է ներդնել վերը նշված ենթամասնագիտացմամբ դատավորների համակարգ, սակայն, մեկ տարբերությամբ: Մարզերի նեղ մասնագիտացված դատավորները, ի թիվս մինչդատական քրեական վարույթի վերաբերյալ գործերի, կքննեն նաև այլ քրեական գործեր:

Մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննելու համար նախատեսվում է առաջին ատյանում դատավորների թվակազմը ավելացնել առնվազն 17-ով, որից առնվազն 8-ը կգործեն Երևան քաղաքում, իսկ մնացած 9-ը՝ մարզերում:

1.2. Մասնագիտացումը վերաքննիչ դատարանում

Դատավորների մասնագիտացումը վերը նշված ուղղություններով նախատեսված է նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում: Նախագծերի փաթեթով նախատեսվում է վերաքննիչ քրեական դատարանում դատավորների թվակազմը ավելացնել երեքով, և ինչպես Վերաքննիչ քրեական դատարանում նոր նշանակված երեք դատավորներից, այնպես էլ Վերաքննիչ քրեական դատարանի գործող դատավորներից Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընտրել վեց դատավորներ, ովքեր կիրականացնեն մինչդատական քրեական վարույթի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ իրականացնելու մասին գործերով կայացված ակտերի վերանայում:

⁸ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով հնարավորություն է տրվում, որպեսզի Բարձրագույն դատական խորհուրդը քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից կարողանա ընտրել դատավորներ, որոնք, ի լրումն համապատասխան մասնագիտացման գործերի, քննեն նաև առանձին տեսակի (անչափահասների, Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված և անօրինական պահվող երեխաների վերադարձի, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և այլն) գործեր (հոդված 21, մաս 3):

1.3. Մասնագիտացված դատավորների թափուր տեղերի համալրման կարգը

Նախագծով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում և վերաքննիչ քրեական դատարանում մինչդատական քրեական վարույթի գործերի և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ հետ կապված գործերի քննության համար մասնագիտացված դատավորների թափուր տեղերի առաջին համալրման համար նախատեսված են հատուկ կարգավորումներ:

Գործող դատավորների համար նախատեսված է թափուր տեղերը համալրելու ավելի պարզեցված ընթացակարգ: Վերջիններս թափուր տեղի համալրման հայտի շրջանակներում ներկայացնում են միայն բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ, ինչպես նաև ազատվում են որակավորման ստուգման գրավոր քննության փուլից՝ մասնակցելով միայն Բարձրագույն դատական խորհրդում հարցազրույցի փուլին:

Այլ հավակնորդների համար դատարանի թափուր տեղերի համալրումը իրականացվելու է «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված ընդհանուր կարգով, սակայն որոշ բացառություններով: Թեկնածուների կողմից Արդարադատության ակադեմիայում ուսուցման և փորձաշրջանի իրականացման համար սահմանված է ավելի կարճ ժամկետ՝ 1 ամիս⁹: Նշենք, որ սովորական պայմաններում թեկնածուների ուսումնառության ժամկետի տևողությունն առնվազն 7 ամիս է, իսկ փորձաշրջանի տևողությունը՝ 3 ամիս, ընդհանուր՝ 10 ամիս¹⁰:

Վերաքննիչ քրեական դատարանում թափուր տեղերը գործող դատավորների կողմից համալրման դեպքում ևս նախատեսվել է համանման կարգավորում, իսկ այլ մանրամասները ըստ Նախագծերի փաթեթի պետք է կարգավորվի Բարձրագույն դատական խորհրդի կողմից:

⁹ Նշենք, որ Նախագծերի փաթեթի նախնական տարբերակում, որը հրապարակվել էր նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft), նեղ մասնագիտացված դատավորների թեկնածուների համար նախատեսվում էր Արդարադատության ակադեմիայում ուսուցման և փորձաշրջանի երկամսյա ժամկետ:

¹⁰ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է Ազգային ժողովի կողմից 02.05.2013, ՀՕ-50-Ն, ՀՀՊՏ 2013.06.07/30(970), հոդված 551, հոդված 22, մաս 4 և հոդված 23, մաս 1:

2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

2.1. Դատավորների մասնագիտացման դրական և բացասական կողմերը

Դատարանների կամ դատավորների մասնագիտացումը զարգացող միտում է ամբողջ աշխարհում, ինչը առավելապես պայմանավորված է իրավական կարգավորման ոլորտների ընդլայնմամբ և կարգավորման առարկաների բարդացմամբ¹¹, որի պայմաններում խնդրահարույց է դառնում իրավական բոլոր փոփոխություններին և զարգացումներին հետևելը: Նեղ մասնագիտացման դատավորները ձեռք են բերում իրավունքի որոշակի ճյուղում ավելի խոր իմացություն և փորձառություն, որի արդյունքում բարձրանում է նաև նրանց կողմից կայացված որոշումների որակը:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը (այսուհետ՝ նաև ԵԴԽԽ) դատարանների մասնագիտացման վերաբերյալ իր կարծիքում մանրամասն անդրադարձ է կատարել դատարանների մասնագիտացման թե՛ դրական և թե՛ բացասական կողմերին¹²: Արդարադատության նախարարությունը, փորձելով հիմնավորել Նախագծերի փաթեթի անհրաժեշտությունը, ԵԴԽԽ կարծիքը ներկայացրել է միակողմանիորեն՝ մատնանշելով միայն այնտեղ տեղ գտած դրական կողմերը, սակայն, չանդրադառնալով բոլոր այն բացասական հետևանքներին, որոնք կարող են առաջանալ դատավորների նեղ մասնագիտացման դեպքում:

Թեև դատական մասնագիտացումը նպատակահարմար է մի շարք դեպքերում և կարող է ունենալ դրական արդյունքներ, այն պարունակում է նաև մի շարք վտանգներ, մասնավորապես.

- Նեղ մասնագիտացման դատավորները կարող են տարանջատվել ընդհանուր դատական համակարգից:
- Դատավորները, որոնք նեղ մասնագիտացման հետևանքով ընդունում են միևնույն տեսակի հարցերի վերաբերյալ որոշումներ, կարող են հակված լինել վերարտադրելու նախկին որոշումները, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ հասարակության պահանջներին համապատասխան նախադեպի

¹¹ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ, կարծիք թիվ 15 (2012), կետ 8, ընդունվել է ԵԴԽԽ 13-րդ լիագումար նիստի ժամանակ: Հայերեն տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/no15-in-armenian-15-2012-/16808e64f0> (այցելվել է 03.02.2021թ.):

¹² Հաշվի առնելով, որ դատավորների մասնագիտացման դրական կողմերը արդեն իսկ մանրամասն ներկայացված են Նախագծերի փաթեթին կից հիմնավորման մեջ՝ դրանց առանձին և ավելի մանրամասն անդրադարձ չենք կատարի:

զարգացմանը: Այս վտանգն առկա է նաև, երբ որոշակի ոլորտում որոշումները մշտապես ընդունվում են դատավորների միևնույն խմբի կողմից¹³:

- Նեղ մասնագիտացված դատավորները, որոնք տարանջատվում են դատական համակարգի մնացած կազմից, կարող են ենթարկվել դատավարության մասնակից կողմերի, նույն հետաքրքրություններով միավորված մարդկանց խմբերի և պետական այլ ուժերի կողմից ճնշումների¹⁴:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) դիրքորոշումը դատավորների մասնագիտացման վերաբերյալ նույնպես միանշանակ չէ: Հանձնաժողովը նույնպես ընդգծում է նեղ մասնագիտացման թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը՝ կախված ներդրվող մասնագիտացման համակարգից, մասնագիտացման ոլորտից, դատավորների թվակազմից և մի շարք այլ հանգամանքներից: Վենետիկի հանձնաժողովը մասնագիտացման դրական կողմ է համարում կայացվող դատական ակտերի որակի բարձրացումը և ավելի արդյունավետ դատավարության իրականացումը¹⁵: Որպես հնարավոր բացասական հետևանք՝ Հանձնաժողովը նշում է նեղ մասնագիտացված դատավորների չափից դուրս ինստիտուցիոնալացված դառնալու վտանգը, որի պայմաններում վերջիններս չեն ունենում անկախության և անաչառության անհրաժեշտ մակարդակ մարդու իրավունքների ոլորտում իրենց պարտականությունները պատշաճ իրականացնելու համար¹⁶:

2.2. Դատավորների մասնագիտացումը այլ երկրներում

Մայրցամաքային իրավական համակարգին պատկանող երկրներում գործում է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության 2 հիմնական մոդել:

Առաջին կամ ֆրանսիական մոդելի հիմքում ընկած է դատավորի ակտիվ դերը, ով նախաքննության փուլում, բացի իր վերահսկողական գործառույթներից իրականացնում է նաև հանցագործության վերաբերյալ փաստերի հավաքագրում: Այս մոդելը մինչև վերջին տասնամյակները գերակշռող է եղել եվրոպական մի շարք երկրներում:

¹³ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ, կարծիք թիվ 15 (2012), կետ 15:

¹⁴ Նույն տեղում, կետ 19:

¹⁵ Venice Commission, Turkey- Opinion on the Duties, Competences and Functioning of the Criminal Peace Judgeships, adopted by the Venice Commission at its 110th Plenary Session, CDL-AD(2017)004, կետ 57:

¹⁶ Նույն տեղում:

Սակայն, աստիճանաբար եվրոպական երկրների մեծ մասը, մասնավորապես՝ Գերմանիան, Շվեյցարիան, Իտալիան և Իսպանիան, անցում են կատարել նոր համակարգի, որտեղ դատավորի դերը սահմանափակված է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ վերահսկողության իրականացմամբ: Այս երկրորդ մոդելում դատավորը առավելապես կենտրոնացած է իրավունքի և ընթացակարգային հարցերի վրա և գործում է որպես արբիտր պաշտպանական կողմի և դատախազի միջև:

Այնուամենայնիվ, նշված երկու մոդելներին էլ բնորոշ է մինչդատական քրեական վարույթում դատավորների ակտիվ վերահսկողական դերը, որը չի սահմանափակվում միայն անձին կալանավորելու կամ մարդու իրավունքներին առնչվող այլ միջնորդություններ քննելով, այլ ներառում է նախնական քննության պրոցեսի նկատմամբ շատ ավելի լայն վերահսկողական լիազորություններ:

Ֆրանսիա¹⁷

Ֆրանսիայում պատմականորեն մեծ կարևորություն է տրվել գործի հենց մինչդատական քրեական վարույթի փուլին և դատավորին այստեղ վերապահված է կենտրոնական դեր: Այս փուլը առավելապես բնութագրվում է որպես դատական վերահսկողության ներքո հանցագործության և դրա վերաբերյալ փաստերի քննություն, քան թե անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությունը հիմնավորելու համար ապացույցների հավաքագրումով: Մինչդատական քրեական վարույթի փուլում հետաքննությունն իրականացվում է ոստիկանության կողմից՝ դատախազի հսկողության ներքո: Դատարանի գործառույթը, սակայն, այս փուլում չի սահմանափակվում ներկայացրած փաստերի հիման վրա որոշում կայացնելով, այլ դատարանը ունի ակտիվ դեր և սեփական նախաձեռնությամբ իրականացնում է հետաքննություն պարզելու համար անձի մեղավորությունը կամ անմեղությունը: Նշված գործառույթը իրականացնող դատավորներին անվանում են քննիչ դատավորներ (*juge d'instruction*):

Միաժամանակ, անձին ազատությունից զրկելու հետ կապված հարցերի լուծումը վերապահված է *ազատության և կալանքի դատավորներին* (*juge des libertés et de la détention*): Այդ դատավորները մինչդատական քրեական վարույթի փուլում քննում են ինչպես կալանքի, այնպես էլ խուզարկությունների և հատուկ էլեկտրոնային միջոցների վերահսկմամբ տնային կալանքի վերաբերյալ գործերը: Ֆրանսիական համակարգում նման մասնագիտացված դատավորների ներդրման տրամաբանությունը նրանում է, որ նրանք իրականացնում են արտաքին

¹⁷ Council of Europe, Technical Paper: Comparative analysis on preventing misuse of public authority in the corporate sector, ECCU-PRECOP-TP-1/2014, էջ 23, <https://rm.coe.int/16806eedb6> (այցելվել է 03.02.2021թ.):

վերահսկողություն քննիչ դատավորների կողմից կայացվող մարդու իրավունքները սահմանափակող որոշումների նկատմամբ: Անձին ազատությունից զրկելու հետ կապված մասնագիտացված դատավորների համակարգ ներդնելու նախադրյալներից է եղել նաև մեղադրյալների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու բավական բարձր ցուցանիշները¹⁸, սակայն, որոշ ֆրանսիացի մասնագետների պնդմամբ՝ խնդիրը, այնուամենայնիվ, չի լուծվել¹⁹:

Իտալիա²⁰

Իտալիայի դատական համակարգում մինչդատական քրեական վարույթի փուլում մարդու իրավունքները և ազատությունները պատշաճ կերպով ապահովելու համար նախատեսված են երկու տեսակի մասնագիտացված դատավորներ: Առաջինը *նախնական քննության դատավորն* է (the Judge for preliminary investigation), իսկ երկրորդը՝ *նախնական դատական լսումների դատավորը* (the preliminary hearing judge):

Հետաքննության ընթացքում ոստիկանության և դատախազության կողմից անձի իրավունքները և ազատությունները սահմանափակող ցանկացած միջոցառման, ինչպես նաև ակտիվների սառեցման թույլտվություն տրվում է նախնական քննության դատավորի կողմից: Նախնական քննության դատավորը քննում է նաև կողմերի բոլոր միջնորդությունները, այդ թվում՝ հետաքննությունը դադարեցնելու վերաբերյալ:

Նախնական քննության փուլը ավարտվում է դատախազի կողմից անձի վերաբերյալ մեղադրանքը հաստատող կամ հերքող որոշման կայացմամբ: Երկու դեպքում էլ այդ որոշումը հաստատվում է նախնական քննության դատավորի կողմից:

Անձի վերաբերյալ մեղադրանքը հաստատվելու դեպքում գործը փոխանցվում է նախնական դատական լսումների դատավորին, որը կայացնում է վերջնական որոշում անձի վերաբերյալ մեղադրական եզրակացության հաստատման կամ հերքման վերաբերյալ, իսկ հաստատման դեպքում գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկում է դատական քննության:

¹⁸ Pauline Le Monnier de Gouville, Le juge des libertés et de la détention entre présent et avenir, Les Cahiers de la Justice 2011/4 (N° 4), <https://www.cairn.info/revue-les-cahiers-de-la-justice-2011-4-page-145.htm#no1> (այցելվել է 03.02.2021թ.):

¹⁹ Alexandre Gillioen, Le juge des libertés et de la détention: son rôle et ses limites, 14/03/2019, <https://consultation.avocat.fr/blog/alexandre-gillioen/article-27290-le-juge-des-libertes-et-de-la-detention-son-role-et-ses-limites.html> (այցելվել է 03.02.2021թ.):

²⁰ Council of Europe, Technical Paper: Comparative analysis on preventing misuse of public authority in the corporate sector, նշվ. աշխ., էջ 26:

Ռուսաստանի Դաշնություն

Մինչդատական քրեական վարույթի փուլի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մասնագիտացված դատավորների համակարգ ներդնելու առաջարկ է եղել նաև Ռուսաստանի Դաշնությունում²¹: Գաղափարի հեղինակները մինչդատական քրեական վարույթում մասնագիտացված դատավորների (следственные судьи) ներդրման անհրաժեշտությունը հիմնավորում են մրցակցային դատավարության և դատական բոլոր փուլերի նկատմամբ ակտիվ դատական վերահսկողության անհրաժեշտությամբ: Համաձայն հեղինակների՝ Ռուսաստանի Դաշնության գործող քրեական դատավարության օրենսգրքի հիմնական թերությունը մինչդատական քրեական վարույթի փուլում կողմերի անհավասարության մեջ է, ինչը հանգեցնում է նրան, որ գործի վերաբերյալ բոլոր ապացույցները ձևավորվում են միակողմանիորեն՝ միայն մեղադրանքը պաշտպանող կողմի կողմից: Այս համատեքստում մասնագիտացված դատավորների դերը պետք է լինի ակտիվ դատական վերահսկողություն իրականացնելը՝ առանց քրեական հետապնդման գործառույթ ստանձնելու: Նշված գործառույթը իրականացնելու համար մասնագիտացված դատավորները լիազորված են լինելու որոշել՝ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ մերժելու, անձին որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և մեղադրական եզրակացությունը հաստատելու հարցերը, ինչպես նաև լուծելու են մինչդատական քրեական վարույթի փուլում կողմերի կողմից ներկայացված միջնորդությունները, այդ թվում՝ անձի նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցառումներ կիրառելու, խուզարկության և նմանատիպ այլ հարցեր:

Առաջարկվում է նաև մասնագիտացված դատավորների կողմից մինչդատական քրեական վարույթի փուլի նկատմամբ պարտադիր վերահսկողություն սահմանել ծանր և առանձնապես ծանր քրեական գործերով, իսկ մնացած դեպքերում գործի քննությունը իրականացնել ընդհանուր կարգով:

Մասնագիտացված դատավորների համակարգի կազմավորման առումով առաջարկվում է այդ պարտականությունը դնել արդեն իսկ գործող դատավորների

²¹ Совет при Президенте Российской Федерации по развитию гражданского общества и правам человека, Предложения по созданию института следственных судей в Российской Федерации, <http://president-sovet.ru/documents/read/351/>, (այցելվել է 03.02.2021թ.):

վրա՝ ռոտացիոն կարգով, 3-5 տարի ժամկետով: Հեղինակները հստակ ընդգծել են ռոտացիայի կարևորությունը դատավորների անկախության ապահովման գործում:

Մինչդատական քրեական վարույթում մասնագիտացված դատավորների ներդրման առաջարկը եղել է 2015թ., սակայն առ այսօր չկա դրա վերաբերյալ վերջնական որոշում, և այն գտնվում է ինչպես պետական մարմինների, այնպես էլ մասնագիտական հանրության քննարկման տիրույթում:

Թուրքիա

Մինչդատական քրեական վարույթի շրջանակներում մասնագիտացված դատավորների (peace judgeships) համակարգ է ներդրված նաև Թուրքիայում: Այս դատավորներին է վերապահված կալանքի, խուզարկության, բռնագանձումների և հեռախոսային խոսակցությունների հետ կապված գործերի, դատախազների կողմից քրեական հետապնդման դադարեցման որոշումների վերանայման քննության բացառիկ իրավունքը²²:

Թուրքիայի փորձառությունը հետաքրքրական նրանով, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից իրենց ստանձնած պարտավորությունների կատարման՝ հանձնաժողովի (Մոնիտորինգային հանձնաժողով) կողմից²³ հստակորեն ընդգծվել են այն քաղաքական դրդապատճառները²⁴, որոնց հաշվառմամբ են իշխանությունները ձեռնամուխ եղել մասնագիտացված դատավորների համակարգի ներդրմանը: Թուրքիայում ներդրված միջդատական քրեական վարույթում մասնագիտացված դատավորների համակարգի վերաբերյալ կարծիք է հրապարակել նաև Վենետիկի հանձնաժողովը, մատնանշելով մի շարք խնդրահարույց կարգավորումներ, մասնավորապես՝ մասնագիտացված դատավորների անկախության, այդ գործերով կայացված որոշումների վերանայման արդյունավետության հետ կապված խնդիրներ:

²² Venice Commission, Turkey- Opinion on the Duties, Competences and Functioning of the Criminal Peace Judgeships, կետ 17:

²³ Parliamentary Assembly, The functioning of democratic institutions in Turkey, 06 June 2016, Doc. 14078, կետ 5, https://www.ecoi.net/en/file/local/1350862/1226_1465286865_document.pdf (այցելվել է 03.02.2021թ.):

²⁴ 2013թ. Թուրքիայում բացահայտված կոռուպցիոն գործերը, որոնցում ընդգրկված էին 4 նախարար և գործող վարչապետի որդին, նախանշեցին ներքաղաքական փոփոխությունների սկիզբը: Այդ փոփոխությունները ուղեկցվեցին սահմանափակող օրենսդրության ընդունմամբ, գործադիր իշխանության կողմից դատական իշխանության վրա ազդեցության մեծացմամբ և մասնագիտացված դատավորների (peace judgeships) ստեղծմամբ:

3. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹՈՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ

3.1. Նախագծերի փաթեթի հիմնավորվածությունը

Կառավարությունը մինչդատական քրեական վարույթի գործերով մասնագիտացման անհրաժեշտությունը հիմնավորում է դատավորների մասնագիտացման անհրաժեշտությամբ, ինչը, ըստ իրենց, թույլ կտա նախ՝ բարձրացնել նշված գործերի քննության արդյունավետությունը, ինչպես նաև մասնագիտացված դատավորների նոր հաստիքների ավելացման արդյունքում կրթական դատավորների ծանրաբեռնվածությունը:

Սակայն, Նախագծերի հիմնավորման մեջ ներկայացված խնդիրները և դրանց լուծման համար առաջարկվող կարգավորումները չեն համապատասխանում միմյանց: Նշվածը և մի շարք այլ հանգամանքներ, որոնք կներկայացնենք ստորև, հիմք են տալիս կասկածի տակ դնելու Նախագծերի փաթեթով հետապնդվող նպատակների արժանահավատությունը:

Իրավունքի որևէ ոլորտում դատավորների մասնագիտացումը, առհասարակ, պետք է հիմնված լինի պատշաճ և բազմակողմանի ուսումնասիրությունների հիման վրա: Անցնելով մասնագիտական և հասարակական լայն քննարկումներ²⁵, պետք է վեր հանվեն իրավահարաբերությունների այն ոլորտը, որը ավելի բարդ և առանձնահատուկ լինելով պայմանավորված՝ կարիք ունի խորը գիտելիքներ և փորձառություն ունեցող դատավորների ներգարվման: Նախագծերի հիմնավորման մեջ չկան ուսումնասիրություններ, որոնք ինչ-որ կերպ դատավորների հենց մինչդատական քրեական վարույթում մասնագիտացման անհրաժեշտությունը կդարձնեն հիմնավորված: Նման հիմնավորում կարող էր լինել, օրինակ՝ մինչդատական քրեական գործերով կայացված որոշումները վերադաս դատարանների կողմից բեկանման պատճառների մասին վիճակագրության ուսումնասիրությունը և վերադաս դատարանների կողմից այդ գործերով մարդու իրավունքների բազմաթիվ խախտումների արձանագրումը կամ այդ նույն խախտումները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արձանագրումը: Նախագծի հեղինակները դատավորների նեղ մասնագիտացումը որպես դրական երևույթ բնութագրելու համար միակողմանիորեն ներկայացնում են ԵԴԽԽ դատավորների մասնագիտացման վերաբերյալ կարծիքում տեղ գտած դրական փաստարկներին, սակայն, չեն անդրադառնում այդ նույն կարծիքում տեղ գտած և սույն վերլուծությամբ ներկայացված այն բոլոր բացասական

²⁵ Ռուսաստանի Դաշնությունում, մինչդատական քրեական վարույթի գործերով դատավորների մասնագիտացման առաջարկ եղել է 2015թ., սակայն առ այսօր այն գտնվում է մասնագիտական և հանրային քննարկումների տիրույթում:

հետևանքներին, որոնք կարող են առաջանալ դատավորների նեղ մասնագիտացման դեպքում:

Մինչդատական քրեական վարույթի գործերով դատավորների մասնագիտացման հիմնավորումներից մեկը այդ փուլում քննությունը ավելի արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունն է: Այս պարագայում, նախ և առաջ, անհասկանալի է, եթե անհրաժեշտ է նեղ մասնագիտացում գործերի քննության արդյունավետության համար, ապա ինչո՞ւ, ի տարբերություն Երևան քաղաքի, մարզերի մասնագիտացված դատավորները բացի իրենց նեղ մասնագիտացումից պետք է քննեն այլ քրեական գործեր ևս: Եթե կառավարության հիմնավորումը այն է, որ մարզերի դատավորները լինելու են ավելի քիչ ծանրաբեռնված, քան Երևան քաղաքի դատավորները և հետևաբար կարող են քննել այլ քրեական գործեր ևս, ապա այս տրամաբանությամբ ինչո՞ւ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում չի ավելացվում ընդհանուր քրեական մասնագիտացման դատավորների թվակազմը, ինչը կթեթևացնի դատավորների ծանրաբեռնվածությունը՝ հնարավորություն տալով բոլոր դատավորներին լինել ընդհանուր քրեական մասնագիտացման և կբացառի նեղ մասնագիտացման արդյունքում առաջացող մի շարք վտանգներ:

Առկա է նաև խորքային հակասություն մասնագիտացված դատավորներին ներկայացվող պահանջների և Նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումների միջև: Դատավորների մասնագիտացումը ենթադրում է իրավունքի որոշակի ճյուղի վերաբերյալ խորքային գիտելիքների իմացություն և համապատասխան փորձի առկայություն: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, Նախագծերի փաթեթով մասնագիտացված դատավորների թեկնածուների համար նախատեսվում է սահմանել Արդարադատության ակադեմիայում ուսուցման և փորձաշրջանի իրականացման շատ ավելի կարճ ժամկետ՝ 1 ամիս²⁶, քան նախատեսվում է սովորական պայմաններում ընդհանուր մասնագիտացման դատավորների համար: Անհասկանալի է, թե մասնագիտացված դատավորի այն թեկնածուները²⁷, ովքեր չունեն քրեական գործերով դատավորի փորձ և ավելին, անցնում են ուսումնառության և փորձաշրջանի նման կարճ ժամանակահատված, ինչպե՞ս կարող են համարվել այդ ոլորտում մասնագիտացված և կայացնել մարդու իրավունքների սահմանափակմանը առնչվող որակյալ որոշումներ:

Որպես հետաանդվող նպատակ է ներկայացվում նաև հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, քանի որ առկա կարգավորումների շրջանակներում

²⁶ Նշենք, որ սովորական պայմաններում թեկնածուների ուսումնառության և փորձաշրջանի ժամկետի ընդհանուր տևողությունն առնվազն 10 ամիս է:

²⁷ Նախագծերի փաթեթով նախատեսվում է նաև հանել դատավորի թեկնածուի հավակնորդին ներկայացվող իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան ունենալու պահանջը:

դատավորների հերթապահության ժամանակացույցի հրապարակայնության դեպքում կանխատեսելի է դառնում համապատասխան միջնորդությունը քննող դատավորի անձը: Նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումները, սակայն, այս առումով շատ ավելի խնդրահարույց են, քանի որ այդ գործերի քննության համար նախատեսվում է սահմանել շատ սահմանափակ թվով և չփոփոխվող դատավորների կազմ: Մասնավորապես, Երևան քաղաքում նախատեսվում է նեղ մասնագիտացման 8, իսկ մարզերից յուրաքանչյուրում՝ 1 մասնագիտացված դատավորների հաստիքներ: Արդյունքում առավել քան կանխատեսելի է լինելու դատավորների այն շրջանակը, ովքեր կքնեն համապատասխան միջնորդությունները: Նշվածը ավելի խնդրահարույց է մարզերի դեպքում քանի որ առանց ռոտացիոն սկզբունքի մեկ դատավոր մշտապես կայացնելու է նման միջնորդությունների վերաբերյալ որոշումներ: Այս պարագայում շատ ավելի իրատեսական են դատավորի նկատմամբ ինչպես դատավարության մասնակիցների, այնպես էլ իշխանության կողմից ճնշումների և ազդեցության մեծացումը, ինչպես նաև առհասարակ կոռուպցիոն ռիսկերը:

Հիմնավորման մեջ հղում է կատարվում նաև որոշ երկրների փորձին, որոնցում արդեն իսկ գործում են նման մասնագիտացված դատավորներ: Մասնավորապես նշվում է, որ «Եվրոպական որոշ երկրներում, օրինակ՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, վերջին տարիներին առանձնացվել են մասնագիտացված դատավորներ, որոնք քննում են կալանքի վերաբերյալ հարցերը և նախաքննության ընթացքում վերահսկողություն իրականացնում անհատի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նկատմամբ»: Միայն երկրների անվանումները թվարկելը՝ առանց բացահայտելու այդ երկրներում առկա մոդելների էությունը, դրանց գործունեության դրական կամ բացասական արդյունքները, կարծում ենք ոչ մի կերպ չի կարող համարվել միջազգային փորձի պատշաճ ուսումնասիրություն, ինչը կարելի է ներկայացնել որպես հիմնավորում: Ավելին, Վենետիկի հանձնաժողովը ընդգծել է, որ մինչդատական քրեական վարույթի գործերով առանձին մասնագիտացված դատարանի ստեղծումը ընդունված չէ Եվրոպայի մի շարք ժողովրդավարական հասարակությունների դատական համակարգերի կողմից²⁸: Սույն վերլուծությամբ ներկայացված միջազգային փորձը ևս վկայում է, որ մինչդատական քրեական վարույթով դատավորների մասնագիտացումը տարբեր երկրներում ունի տարբեր առանձնահատկություններ, սակայն հստակ է մեկ հանգամանք՝ մասնագիտացված դատավորների լիազորությունները չեն սահմանափակվում սոսկ անձի նկատմամբ հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ համաձայնություն տալով, այլ

²⁸ Venice Commission, Turkey- Opinion on the Duties, Competences and Functioning of the Criminal Peace Judgeships, կետ 60:

շատ ավելի լայն են և կառուցված են նախնական քննության օրինականության նկատմամբ վերահսկողության հարցում դատարանի առավել ակտիվ և վճռորոշ դերի վրա:

3.2. Նախագծերի փաթեթը որպես առկա քաղաքական համատեքստում դատավորների անկախության համար ռիսկ

Նախագծերի փաթեթը անհրաժեշտ է նաև դիտարկել ավելի լայն համատեքստում, այդ թվում՝ նաև քաղաքական: Բավական է նշել, որ կառավարության նիստի ընթացքում, երբ քննարկվում էր Նախագծերի փաթեթը, վարչապետը ընդգծեց. «Նախագծի նպատակը այն է, որ նոր նշանակված դատավորների անաչառությունը որևէ կերպով կասկածի տակ չդրվի և նրանց կողմից կայացված որոշումները ընդունվեն ի գիտություն և ոչ թե քննարկվեն, թե ինչ պատճառահետևանքային, այդ թվում՝ քաղաքական կապ կա այդ որոշումների միջև»: Այս համատեքստում է Նախագծերի փաթեթին անդրադարձել նաև արդարադատության նախարարը 2020թ. հունվարի 14-ին հանրային հեռուստաընկերության եթերում տրված իր հարցազրույցի ընթացքում նշելով. «Կա հստակ հանրային դժգոհություն, մանավանդ, վերջին շրջանում կալանքի միջնորդությունների քննության և այլնի հետ կապված և կարծում ենք, որ այս նոր ընթացակարգով թեկնածուների ընտրությունը կնպաստի նրան, որ հանրային վստահությունը ավելանա դատական համակարգի նկատմամբ և աբսուրդային դեպքեր չենք ունենա»²⁹:

Հաշվի առնելով այն իրադարձությունները, որոնց հաջորդեց Նախագծերի փաթեթի ներկայացումը, մասնավորապես՝ դատավորների կողմից մի շարք դեպքերում ընդդիմադիր քաղաքական գործիչների նկատմամբ ներկայացվող խափանման միջոցներ կիրառելու միջնորդությունները մերժելը, ինչպես նաև կիրառված հարկադրանքի միջոցները ոչ իրավաչափ ճանաչելը, Նախագծերի փաթեթի իրական նպատակների վերաբերյալ կասկածները ավելի են ամրապնդվում:

Վերևում արդեն իսկ անդրադարձանք Թուրքիայի օրինակին, որտեղ մինչդատական քրեական վարույթի գործերով մասնագիտացված դատավորների համակարգը ներդրեց հենց քաղաքական դրդապատճառներով, ինչն էլ հստակ արձանագրվել է Եվրոպայի խորհրդի մոնիտորինգային հանձնաժողովի կողմից:

²⁹ Նախարարը թերևս նկատի ունի քաղաքական հնչեղություն ունեցող գործերից մեկով դատարանի մերժման որոշումը:

3.3. Նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումների վտանգները արդար դատաքննության իրավունքի համար

Ինչպես արդեն իսկ անդրադարձել ենք վերևում, մի շարք միջազգային հեղինակավոր կառույցներ դատավորների մասնագիտացման վերաբերյալ իրենց կարծիքներում մատնանշում են նեղ մասնագիտացված դատավորների ընդհանուր դատական համակարգից տարանջատվելու վտանգը: Դատավորների տարանջատումը ընդհանուր դատական համակարգից իր հերթին առաջ է բերում մի շարք վտանգներ, մասնավորապես՝

- նրանք կարող են կտրվել իրավական ոլորտում տեղի ունեցող ընդհանուր զարգացումներից և փոփոխություններից, և արդյունքում նրանց կողմից կայացված որոշումները չի բավարարի հասարակության զարգացման պահանջմունքները,
- դատական ընդհանուր համակարգից տարանջատումը և անընդհատ նույն տիպի գործեր քննելը կարող է ձևավորել միակողմանի մոտեցում և հանգեցնել նախկինում կայացրած որոշումների մեխանիկական վերարտադրմանը,
- դատական ընդհանուր համակարգից տարանջատումը և դատավորների նույն կազմի կողմից անընդհատ նույն տիպի գործեր քննելը մեծացնում է դատավարության կողմերի և իշխանությունների կողմից նրանց նկատմամբ ազդեցության և ճնշումների մեծացման վտանգը:

Վերը նշված բոլոր մտահոգություններն ավելի են ընդգծվում Նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումների լույսի ներքո, որով խնդրո առարկա գործերը քննելու համար նախատեսվում է՝ Երևան քաղաքում՝ 8, իսկ յուրաքանչյուր մարզում՝ 1 մասնագիտացված դատավոր: Խնդրահարույցն այն է, որ նշված դատավորների կազմը չի փոփոխվելու, առկա չէ ռոտացիոն մեխանիզմ, և նրանք մշտապես քննելու են մինչդատական քրեական վարույթի վերաբերյալ գործեր (Երևան քաղաքում՝ նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունները): Այնուհետև, այդ գործերով կայացված որոշումների դեմ բերված բողոքները քննվելու են վերաքննիչ քրեական դատարանի մասնագիտացված 6 դատավորների կողմից, որտեղ նույնպես նախատեսված չէ ռոտացիա: Նմանաբնույթ խնդրի անդրադարձել է Վենետիկի հանձնաժողովը Թուրքիայում մինչդատական քրեական վարույթի շրջանակներում մասնագիտացված դատավորների ինստիտուտի ներդրման վերաբերյալ իր կարծիքում, ընդգծելով, որ. «Մասնագիտացված դատավորները համարժեք փորձ և որակավորում ունեցող դատավորներ են և միմյանց գործերը վերանայելու դեպքում կարող է ստեղծվել փակ շղթա: Այս դեպքում կան հիմնավոր կասկածներ,

որ այդ դատավորները կվստահեն ինչպես միմյանց, այնպես էլ իրենց կողմից կայացված որոշումներին: Նրանք, բնականաբար, կպաշտպանեն ինչպես իրենց գործընկերների հեղինակությունը և մասնագիտական ունակությունները, այնպես էլ այն համակարգը ամբողջությամբ, որին իրենք նույնպես մաս են կազմում: Հետևաբար, այս համակարգը չունի բավարար հեռանկար կալանավորման որոշման օրինականության դեմ բերված անաչառ և հիմնավորված վերաքննիչ բողոքի քննություն ապահովելու համար³⁰:»

Այսպիսով, թեև Նախագծերի փաթեթով առաջարկվում է, որ մասնագիտացված դատավորների կողմից կայացված որոշումների վերաքննության կարգով բողոքարկման հանրավորություն, սակայն հաշվի առնելով, որ վերաքննիչ քրեական դատարանում նույնպես գործելու է նեղ մասնագիտացված փոքր թվով և չփոփոխվող դատավորների կազմով փակ շղթա ձևավորելու վտանգը, այս դեպքում ևս առավել քան իրատեսական է: Հատկանշական է, որ դեռևս 2017թ. հանրային քննարկման ներկայացված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի³¹ 21-րդ հոդվածով նախատեսվում էր, որ *քրեական մասնագիտացման դատավորներից Բարձրագույն դատական խորհրդի կողմից կընտրվեն մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորներ՝ մեկ տարի ժամկետով, ռոտացիոն սկզբունքով*: Այս կարգավորման տրամաբանությունը նրանում էր, որ բացառվեն վերը նշված բոլոր վտանգները: Վենետիկի հանձնաժողովը, նույնպես, դրական եզրակացություն էր տվել այս կարգավորմանը³², նշելով, որ մինչդատական քրեական գործերով առանձին մասնագիտացված դատավորների համակարգի ներդրումը կարող է համարվել ընդունելի, այնուամենայնիվ, շատ բան կախված է նրանից, թե ինչպես կկազմավորվի մասնագիտացված դատավորների համակարգը³³:

Ի վերջո, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը հնարավորություն է տալիս Բարձրագույն դատական խորհրդին քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից ընտրել դատավորներ, որոնք, ի լրումն համապատասխան մասնագիտացման գործերի, քննեն առանձին տեսակի (անչափահասների, Հայաստանի

³⁰ Venice Commission, Turkey- Opinion on the Duties, Competences and Functioning of the Criminal Peace Judgeships, կետ 71:

³¹ Նախագիծը հասանելի է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում, <https://www.e-draft.am/projects/469>, (այցելվել է 03.02.2021 թ.):

³² Venice Commission, Armenia, Opinion on the Draft Judicial Code, Adopted by the Venice Commission at its 112th Plenary Session, CDL-AD(2017)019, կետ 2:

³³ Նույն տեղում:

Հանրապետություն անօրինական տեղափոխված և անօրինական պահվող երեխաների վերադարձի, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և այլն) գործեր³⁴։ Նման մոտեցման տրամաբանությունն այն է, որ առանձին մասնագիտացման գործեր քննող դատավորները չեն տարանջատվում մյուս դատավորներից, այլ, ի թիվս իրենց կողմից քննվող գործերի, պարզապես մասնագիտանում են որոշակի նեղ ոլորտի գիտելիքներ պահանջող գործերի քննության մեջ։ Դա հնարավորություն է տալիս ռեսուրսների խնայողությամբ ապահովել արդյունավետ դատական քննություն՝ նեղ մասնագիտացում պահանջող առանձին գործերում։

3.4. Նախագծերի փաթեթի սահմանադրականությունը

Վերը նշված բոլոր խնդրահարույց դիտարկումների լույսի ներքո, կասկածի տեղիք է տալիս նաև Նախագծերի փաթեթի սահմանադրականությունը։ Նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումները շոշափում են Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված անձի **անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը**։

Սահմանադրության 63-րդ հոդվածը, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը սահմանում են անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության ապահովման երաշխիքներն ու չափորոշիչները։

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 1-ին մասով ամրագրված գործի արդարացի քննության իրավունքի համար պահանջվում է, որ ի թիվս այլնի գործը քննվի «անկախ և անաչառ դատարանի» կողմից։ Դատարանի անկախություն հասկացությունը նշանակում է դատական իշխանությունը օրենսդիր և գործադիր իշխանություններից, առանձնացնելու համար անհրաժեշտ դատավարական երաշխիքների առկայություն։

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, երբ որոշվում է, թե արդյոք տվյալ դատարանը կարող է համարվել «անկախ», հաշվի է առնում, *inter alia*, հետևյալ չափորոշիչները՝

- դատարանի անդամների նշանակման կարգը,
- նրանց պաշտոնավարման ժամկետը,
- արտաքին ճնշումներից պաշտպանության երաշխիքների առկայությունը,

³⁴ Հոդված 21, մաս 3։

- արտաքին ճնշումների դեմ երաշխիքների առկայությունը և մարմինը որպես անկախ ընկալվելու հարցը³⁵:

Նախագծերի փաթեթով նախատեսվող կարգավորումների դեպքում առնվազն դատարանի անդամների նշանակման կարգի, արտաքին ճնշումներից պաշտպանության երաշխիքների առկայության և դատարանի անկախ ընկալվելու չափանիշների տեսանկյունից նեղ մասնագիտացված դատավորների անկախությունը լուրջ կասկածներ է առաջացնում:

Առաջին դեպքում, մասնագիտացված դատավորների թեկնածուների համար նախատեսվում է սահմանել Արդարադատության ակադեմիայում ուսուցման և փորձաշրջանի իրականացման սովորական պայմաններից շուրջ 10 անգամ ավելի կարճ ժամանակահատված (10 ամսի փոխարեն նախատեսելով 1 ամիս), այսինքն՝ նշանակման այլ կարգ: Նման մոտեցումը զուրկ է որևէ հիմնավորումից, առավել ևս մասնագիտացված դատավորների պարագայում, երբ միջազգային փորձը ևս վկայում է, որ դատավորների մասնագիտացումը առաջին հերթին պահանջում է որոշակի ոլորտում խոր գիտելիքների և փորձառության առկայություն:

Երկրորդ, ինչպես արդեն նշել ենք, սահմանափակ թվով և չփոփոխվող նեղ մասնագիտացված դատավորների կողմից, անընդհատ նույն տիպի գործեր քննելը, այնուհետև, վերաքննիչ դատարանում այդ գործերը կրկին սահմանափակ թվով և չփոփոխվող դատավորների կողմից վերանայելը, լի են ինչպես դատավարության մասնակիցների և իշխանության կողմից ճնշումների և ազդեցության մեծացման, այնպես էլ իրավական մտածողության կարծրացման, նախկինում կայացված որոշումների մեխանիկական վերարտադրման փակ շղթա ձևավորելու վտանգներով:

Երրորդ, հաշվի առնելով այն քաղաքական համատեքստը, որը ներկայացվեց և Նախագծերի փաթեթի անհրաժեշտության մասին ՀՀ վարչապետի և արդարադատության նախարարի կողմից ներկայացված հիմնավորումները, ակնհայտ է դառնում, որ Նախագծերի փաթեթի իրական շարժառիթը գործադիր իշխանության կողմից դատավորների կայացրած մի շարք որոշումների հետ համակարծիք չլինելն է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային իրավունքում զարգացրել է այն գաղափարը, որ որ պետության՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված «անկախ և անաչառ տրիբունալի» կողմից

³⁵ European Court of Human Rights, Guide on Article 6 of the Convention – Right to a fair trial (criminal limb), Updated on 31 December 2020, կետ 89, https://www.echr.coe.int/documents/guide_art_6_criminal_eng.pdf, (այցելվել է 03.02.2021թ.):

քննությունն ապահովելու պարտականության շրջանակը չի սահմանափակվում դատական համակարգով: Դրանով նաև պարտականություններ են դրվում գործադիր իշխանության, օրենսդիր իշխանության և պետական իշխանության այլ մարմինների վրա՝ անկախ դրանց աստիճանից՝ հարգելու դատարանների վճիռներն ու որոշումները և դրանցով առաջնորդվելու, նույնիսկ եթե նրանք համաձայն չեն այդ վճիռների ու որոշումների հետ: Այսպիսով, պետության կողմից դատարանների իշխանության նկատմամբ հարգանքը դատարանների նկատմամբ հանրային վստահության, իսկ ավելի լայն իմաստով՝ օրենքի գերակայության համար անփոխարինելի նախապայման է: Դատական համակարգի անկախության և անաչառության սահմանադրական երաշխիքները բավարար չեն դրա համար: Դրանք պետք է արդյունավետորեն ներառված լինեն ամենօրյա վարչական դիրքորոշման և գործելակերպի մեջ³⁶:

Դատավորների նշանակման այլ կարգը, մինչդատական քրեական վարույթի գործերով ինչպես առաջին ատյանում, այնպես էլ վերաքննիչ դատարանում սահմանափակ և չփոփոխվող դատավորների կողմից գործի քննության փակ շղթա ձևավորելը և վերջապես այն քաղաքական համատեքստը, որի պայմաններում ներկայացվում է Նախագծերի փաթեթը և սույն վերլուծության մեջ նշված մի շարք այլ հանգամանքներ «օբյեկտիվ դիտորդի» մոտ նեղ մասնագիտացված դատավորների անկախության վերաբերյալ առնվազն առաջանում են շատ լուրջ կասկածներ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

- Նախագծերի փաթեթով առաջարկվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստեղծել 8, իսկ յուրաքանչյուր մարզում՝ 1 մասնագիտացված դատավորների հաստիքներ: Երևան քաղաքում մասնագիտացված դատավորները քննելու են բացառապես մինչդատական քրեական վարույթի (այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունները), իսկ մարզերի դեպքում՝ մինչդատական քրեական վարույթի, ինչպես նաև այլ քրեական գործեր: Վերաքննիչ քրեական դատարանում այդ դատավորների կողմից կայացված գործերը վերանայվելու են մասնագիտացված 6 դատավորների կողմից: Արդյունքում ձևավորվում է նույն տիպի գործեր քննող և կայացված դատական ակտերը վերանայող փոքր և չփոփոխվող դատավորների կազմ:
- Նման մոտեցումը ոչ միայն խնդրահարույց է արդար դատաքննության սահմանադրական իրավունքի երաշխավորման տեսանկյունից, այլև՝ առաջ է

³⁶ Case of Agrokompleks v. Ukraine, Application no. [23465/03](https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%22001-106636%22%7D), Fifth Section, 6 October 2011, կետ 136, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%22001-106636%22%7D>. (այցելվել է 03.02.2021թ.):

բերում դատավորների նեղ մասնագիտացմանը բնորոշ բոլոր առանցքային ռիսկերը, մասնավորապես՝ ընդհանուր դատական համակարգից դատավորների տարանջատում, նախկինում կայացրած որոշումները մեխանիկորեն վերարտադրելուն հակվածություն, դատավորի նկատմամբ ինչպես դատավարության մասնակիցների, այնպես էլ՝ իշխանության կողմից ճնշումների և ազդեցության մեծացում, կոռուպցիոն ռիսկեր:

- Ֆրանսիայում և Իտալիայում մինչդատական քրեական վարույթում դատավորների մասնագիտացման փորձի և Ռուսաստանի Դաշնությունում առաջարկվող մոդելի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մասնագիտացված դատավորները, պայմանավորված այդ երկրի դատական համակարգի կառուցվածքով, պատմական համատեքստով և այլ հանգամանքներով ունեն տարբեր լիազորություններ, սակայն, բոլոր դեպքերում այդ դատավորներին բնորոշ է նախնական քննության նկատմամբ առավել ակտիվ վերահսկողական դերը, և դատավորների լիազորությունները չեն սահմանափակվում միայն կալանքի կամ մարդու իրավունքներին առնչվող այլ տիպի միջնորդություններ քննելով:
- Իրավունքի որևէ ոլորտում դատավորների մասնագիտացումը իրականացվում է բազմակողմանի և պատշաճ ուսումնասիրությունների, ինչպես նաև մասնագիտական լայն քննարկումների հիման վրա: Նախագծերի փաթեթի դեպքում, սակայն, բացակայում են և՛ պատշաճ հիմնավորումը, և՛ մասնագիտական քննարկումները, գործընթացները, ընդհակառակը, իրականացվում են հրատապ կարգով:
- Նախագծերի փաթեթով առաջարկվող մասնագիտաված դատավորների ընտրության ընթացակարգերը նույնպես համահունչ կերպով չեն արտացալում նեղ մասնագիտացմանը ներկայացվող պահանջները: Դատավորների մասնագիտացման նպատակահարմարությունը առավելապես պայմանավորվում է իրավունքի առավել բարդ ճյուղերում խոր գիտելիքներ և փորձառություն ապահովելու անհրաժեշտությամբ: Մինչդեռ Նախագծերի փաթեթով նեղ մասնագիտացված դատավորների համար՝ ի տարբերություն այլ դատավորների, նախատեսվում է ուսումնառության և փորձաշրջանի շատ ավելի կարճ ժամկետ, այն է՝ 1 ամիս:
- Ընդհանրացնելով վերը նշված բոլոր մտահոգությունները և դրանք դիտարկելով առկա Նախագծերի ներկայացման քաղաքական համատեքստում՝ մինչդատական քրեական վարույթում մասնագիտացված դատավորների ներդրումը Հայաստանում օբյեկտիվ դիտորդի մոտ առաջ է բերում այդ դատավորների անկախության վերաբերյալ լուրջ մտահոգություններ՝ վտանգելով անձի արդար դատաքննության սահմանադրական իրավունքը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: